

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՆ ՊԵՆԵԴԻԿՏՈՍ ԺԶ ՊԱՊԸ ՍԱՆ ՓԱԼՈՅԻ ՄԷՋ

Լատին Ամերիկայի եւ Քարիպեան երկիրներու Կաթոլիկ Եկեղեցւոյ Եպիսկոպոսական Զ. Համաժողովները այս տարի տեղի ունեցան Սան Փաւլոյի Nossa Senhora Aparecida-յի մէջ, որուն բացմանը Մայիսի 13-ին նախագահեց Պենեդիկտոս ԺԶ-ը:

Նորին Սրբութիւնը Սան Փաւլօ ժամանեց Մայիսի 9-ին, եւ յաջորդ օրը հանդիպում ունեցաւ քաղաքիս մէջ գործող բոլոր կրօններու եւ Եկեղեցիներու պետերուն հետ, Տչօ Bento վանատան մէջ:

Ի շարս բոլոր կրօնական պետերուն, սոյն հանդիպումին ներկայ եղաւ նաեւ թեմիս առաջնորդ Գերշ. Տ. Տաթեւ արքեպս. Ղարիպեան, որ յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Պրագիլահայ Գաղութին ողջունեց Սրբազան Քահանայապետը, որ գոհունակութեամբ արտայայտուեցաւ ըսելով, ARMÊNIA, NAÇÃO MUY QUERIDA. (Հայ ժողովուրդը շատ սիրելի ազգ է): Ապա շնորհակալութիւն յայտնելով, խնդրեց փոխանցել իր Օրհնութիւնները մեր գաղութի զաւակներուն:

Պապի այցելութեան գլխաւոր դրդապատճառներէն մին էր, բնիկ պրագիլիացի կրօնաւոր, Frei Galvão-ի, ծնած 1739-ին եւ մահացած 1822-ին, Սրբացման արարողութիւնը: Ուստի Մայիսի 11-ի առաւօտեան, քաղաքիս Campo do Marte օդանաւակայանի ընդարձակ տարածութեան մէջ, ներկայութեամբ մէկ միլիոն երկու հարիւր հազար հաւատացեալներու, որոնք յատկապէս ժամանած էին Հարաւամերիկայի զանազան երկիրներէն եւ Պրագիլի շատ մը նահանգներէն, հանդիսաւորապէս նախագահեց այս յատուկ արարողութեան, որու ընթացքին «ՍՈՒԲԲ» յայտարարեց յիշեալ կրօնաւորը, որպէս SANTO ANTÔNIO DE SANT'ANNA GALVÃO: Ներկայ բազմահազար ներկաները ողջունեցին պրագիլացի առաջին սուրբը անբացատրելի խանդավառութեամբ, հոգեկան մխիթարութեամբ եւ յուզումով: Այս հանդիսութեան հրաւիրուած էր նաեւ թեմիս առաջնորդ Սրբազան Հայրը, որ ներկայ եղաւ Տ. Եզնիկ եւ Տ. Պօղոս աւագ քահանայ Հայրերու հետ եւ անգամ մը եւս առիթը ունեցաւ ողջունելու եւ շնորհաւորելու Նորին Սրբութիւն Պենեդիկտոս ԺԶ. Հռովմի Սրբազան Քահանայապետը:

ԴԻԻԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ՊՐԱԶԻԼԻ